

ԱՌ ՔՈՅՐԸ ԻՄ ՍԻՐԵՑԵԱՆ Ա. Հ. ՎԱՐԳՈՒՀԻ.

Չըրնադ բան յանուան արդեամբ Վարդուհի
Դու յերկնից տըւար ծընունդ յաշխարհի .

Ո՞ր քեզ վայելուչ գեղ զըւարթ յերկրե
Քում ճոխ պատկերին ի կըշիռ իշխե :

Երկնից ոչ այնպես ի բոյս աստեղաց
Նազե տիրուհին ճեմ ի լուսասպանծ,
Որպիսի սիրուն յօրիորդաց պար
Դու գեղածիծաղ վայլես լուսափառ :

Վարդամատն առ քեւ արշալուստյն ծիր
Քընքուշ բում տեսեան պատկեր Է պատիր .
Ցաջացդ ի նըշոյլ աղու փայլ ակունք
Կըրկին գերդ շողան պայծառ արեգունք :

Ո՞ր այն կարմրերփեան վարդ վառեայ գոհար
Այտիցդ ամօքյեած էյանե պայքար .
Ո՞ր շուշան սպիտակ կարնաբուխն ի բոյր
Լանջացդ ի պայծառ ջըշիկնի մարուր :

Այգուն ոչ այնպես ի շաղ մարգարիտ
Համասպրամ շողայ յամիկ եւ յակինք ,

Քան շնորհաց ամբիծ զըգուեայ դու ի գիրկ
Շողշողես փափկիկ, Կուսան գեղեցիկ :

Ձիւնարոյր գուլամբդ ոսկեփայլ փարեայ
Քեւ փունջ փունջ վարսից դեղձան հիւսք ի ծայ,
Քաղցրայուր ի սոյլ սաւառնե մինջ սիր
Հոյլ ի հոյլ յարտեաշ յայտան խոպապիր :

Թե դեմք ի ժղպիտ պարգես սիրալիր
Աջք ամեն յաւար քեզ կան ի յակճիռ .
Սիրտք ամեն առ քեզ էրբ նըռան կամարթ
Երկրերթի շարժես շըքրանց մանիշակ :

Ո՞ր այն տարփելի արփույն արդեօք հիռ
Երջանիկ քո գեջս ետես առ երկիր .
Նըշոյլ որ բըբացդ էջ նախկին յողշոյն
Բիւրուց գոյր ընտրեայ յաստեղաց ողշոյն :

Քում գիրկ պատկերին յակնախըտիդ գեղ
Մեր միտք ի գարմանս, Ձուարբունք պակեան վեհ .
Ըգրեն ցարդ յերկբայս ծըփեյով յերկմիտ,
Մէր քե նոցին պար քեւ պարծի ճշգրիտ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ք Ե Ի Ր Ո Պ Ա Յ

ԱՊԱՐԱՆՔ ՔԱՂԱՔԻՆ Ի ՓԱՐԻՉ.

Ապարանք քաղաքի կամ օթել ՏԸ ՎՄ ըսուած
պալատը Փարիզու այն հոջակաւոր շենքն է , որ
ամեն ատեն քե հասարակաց ուրախութեանց ու
հանդեսներու եւ քե քաղաքական յեղափոխու-
թեանց կեդրոն ու հանդիսարան եղած է . հոն կա-
տարուած են ու կրկատարուին աշխարհիս ամե-
նեն փառաւոր ու բազմածախ հանդեսները . ան-
կեց հրատարակուած են միշտ Գաղղիոյ հին տե-
րութեանց կործանումն ու նորերուն հետգնետե
կանգնումը , եւ անոր առջեւը գլխատուած են
բազմաթիւ ջարագործներ ու նաեւ անմեղ ան-
ձինք :

Այս շենքին հիմնարկութեան առաջին քարը
ձգեց 1553ին յուլիսի 15ին վաճառականաց
տեսուչը Պետրոս Նիել : Հագիւ գետնէն քիջ մը
բարձրացեր էր , 1549ին Հենրիկոս Բ բազաւորը
Դոմինիկոս Պոքքատորոյ կամ Քորբոնե ըսուած

ճարտարապետին յորդորանօքը սկսուած գորացի
ձեւը փոխեց , ու անոր յանձնեց որ նոր ոճով
առաջ տանի շենքը , որ 1605ին Հենրիկոս չոր-
րորդին բազաւորութեան ժամանակը լմընցա :

Ինչպես որ հիմնարկութենէն ալ կերեսայ , այս
շենքը վաճառականաց տեսուչներուն ժողովա-
րան ըլլալու համար սկսեր էր . բայց լմընցա
չլմընցա՝ վախճանը փոխուեցա ու Փարիզու
քաղաքապետին (prefet de la Seine) բնակարան ,
եւ քաղաքական հանդեսներու եւ խրախճանական
հացկերոյքներու տեղ եղա : Որովհետեւ սրանները
բաւական ընդարձակ չէին , ամեն անգամ որ մեծ
հանդես մը կըլլար , հարկ էր շատ ծախքով առ
ժամանակեայ կտորներ աւելցընել քովն ու հան-
դեսէն ետքը փլցընել . ասանկով Նափոյեոնի կայ-
սերութեան հանդեսներէն մինչեւ Լուի-Ֆիլիփ
բազաւորին որդւոյն Օուլեանի դքսին հարսանիքը